



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ԱԷԿ-երը, միջուկային պայթեցումները, ուրանի հանքանյութերի հանայթը և ռեակտորների շահագործման պրոցեսները ռադիոակտիվ աղ-պտրման աղբյուր են: Տարածված ռադիոակտիվ նյութերից են U^{238} -ը, U^{235} -ը, պլուտոնիումը, սարոնցիումը, ցեզիումը և կոբալտը: Այս բոլոր փարրերը ռադիոակտիվ նյութերի արտադրության թափոնների, ԱԷԿ-երի վթարների և փեխնտրոգիական ջրերի միջոցով թափանցում են մթնոլորտ ու ջրային միջավայր: Ծովային շատ կենդանիներ իրենց օրգանիզմում կուտակում և պահպանում են մի շարք ռադիոակտիվ նյութեր, որոնք դրանցով սնվող մարդկանց և այլ գիշարփիչների համար հաճախ մահացա վրանգ են ներկայացնում: Վարակված խոտով սնվող անասունների մեջ հայտնվում են խիստ վրանգավոր ռադիոակտիվ նյութեր, օրինակ, սարոնցիում (Str^{90}), որը կորապաքեր է մարդաշ կենդանիների ու երեխաների համար:

Լուրջ պրոբլեմ է դարձել ռադիոակտիվ թափոնների թաղման հարցը: Դրանք զանազան սարքեր և հագուստներ են, աղպտրված պլապտոնիումով և այլ, պտոմային գենքերի արտադրության մեջ օգտագործվող, ռադիոակտիվ նյութերով: Միայն ԱՄՆ-ում թափոնների թաղման երկու փասնյակից ավել կեպ կա: Դրանք նկատելի հողապարածոթյուններ են գրադեցնում և հաստատատես սպահովագրված չեն թրջման և արտահոսման վրանգներից:

Հաշվի առնելով շրջակա միջավայրի աղպտրման սահանցող միպտոմները, համաշխարհային հանրոթյունն, ի վերջո, խոտպտովանեց, որ իր ուժերից վեր է բնական միջավայրը հարմարեցնել բոռն զարգացող քաղաքակրթության պահանջներին և, ուրեմն, անհրաժեշտ է սահմանափակել հաստարակության պահանջները, հարմարվելու համար բնական միջավայրին: Այս ըմբռման դրսևորումը դարձավ 1991թ. Ռիո դե ժանեյրոյում գոմարված միջազգային ֆորումը, որպեղ ընդունվեցին, այսպես կոչված, «Կայուն զարգացման սկզբունքները»: Գլխավոր միտքն այն է, որ շրջակա միջավայրը մարդկության հիմնական ռեսուրսն է և այն անհիաժեշտ է իր ամբողջ ծավալով պահպանել սպագա սերունդների համար: